

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
N ՍՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ - 14/01-01

ը Կապան

04 հունիսի 2014 թ

ՀՀ Այունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Պազարյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «**Պատվիրատու**» մի կողմից և «**ՎԻԼՀԱՄ**» ՍՊԸ ի դեմս տնօրեն Կ. Ռադայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «**Կատարող**», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 **„Պատվիրատուն,,** հանձնարարում է, իսկ **„Կատարողը,,** ստանձնում է ՀՀ Այունիքի մարզի **„Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման,,** նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքների կատարումը (այսուհետև՝ **„Աշխատանք,,**), համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 **Աշխատանքը** կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. „Պատվիրատուն,, իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել **„Կատարողի,,** կողմից կատարվող **„Աշխատանքի,,** ընթացքը և որակը՝ առանց միջամտելու **„Կատարողի,,** գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող **Աշխատանք,**

ա) Չընդունել **Աշխատանքը՝** իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի **Աշխատանքը** սույն պայմանագրին համապատասխանող **Աշխատանքով** անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել **„Կատարողից,,** վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու **Աշխատանքի** համար վճարված գումարը և պահանջել **„Կատարողից,,** վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե **„Կատարողն,,** էականորեն խախտել է սույն պայմանագիրը: **„Կատարողի,,** կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված **Աշխատանքը** չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է **Աշխատանքի** կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Բնարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան կատարված **Աշխատանքի** արդյունքը, իսկ **Աշխատանքի** արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել **„Կատարողին,,**:

2.2.2 **Աշխատանքի** արդյունքն ընդունելու դեպքում **„Կատարողին,,** վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 **„Պատվիրատուից,,** պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ **„Պատվիրատուի,,** կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել **Աշխատանքի** կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել **„Պատվիրատուին„**:

3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են **„Պատվիրատուին„** և **„Կատարողին„**, միջև հանձնման ընդունման արձանագրության (Հավելված N 3) ստորագրմամբ:

„Կատարողը„ Աշխատանքի կատարման ավարտից 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում **„Պատվիրատուին„** է հանձնում կատարված **Աշխատանքի** մասին իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված **Աշխատանքը** համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և **„Պատվիրատուին„**

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) **„Կատարողին„** նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 **„Պատվիրատուին„** հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3/երեք/ օրյա ժամկետում **„Կատարողին„** է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ **Աշխատանքը** չընդունելու պատճառարանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրով **„Կատարողին„** կատարման ենթակա **Աշխատանքի՝ „Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման„**, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքների կատարման գինը կազմում է 800000.0 (ութե հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է **„Կատարողին„** կողմից իրականացվող բոլոր տիպի ծախսերը և հարկային պարտավորությունները, հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և **„Կատարողին„** իրավունք չունի պահանջել ավելացնելու իսկ **Պատվիրատուին** նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուին կատարված **Աշխատանքի** դիմաց կատարում է անկանխիկ՝ դրամական միջոցների վճարումը **„Կատարողին„** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20 ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված **Աշխատանքի** դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն րավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25 ր:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 **„Կատարողը„** պատասխանատվություն է կրում **Աշխատանքի** կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական ընթացիկ գնման ժամանակացույցին չհամապատասխանող **Աշխատանք** կատարելու յուրաքանչյուր դեպքում **„Կատարողին„** գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (գրո ամբողջ հինգ տասներդասյակն) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված **Աշխատանքի** կատարման ժամկետը խախտելու դեպքում **„Կատարողից,,** յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված **Աշխատանքի** գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են **Աշխատանքը** կատարելու արդյունքում **„Կատարողին,,** վճարման ենթակա գումարների հետ:

5.5 **„Պատվիրատուի,,** կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում **„Պատվիրատուի,,** նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը **Կողմերին** չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների **„Աշխատանքի,,** դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և գործում է մինչև **Կողմերի** սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, **„Կատարողը,,** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ **„Կատարողին,,** հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, **„Պատվիրատուն,,** իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, **„Պատվիրատուն,,** չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով **„Կատարողի,,** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ **„Կատարողը,,** պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել **„Պատվիրատուի,,** կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ **„Պատվիրատուի,,** ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն **Կողմերի** փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անրաժամելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման դեպքերի: Այդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևորգ բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող **Աշխատանքի** ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պետության կարիքների համար կնքվելիք պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորի երեք հարյուր հիսնապատիկը, ապա տվյալ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայման է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ գնման ընթացակարգի արդյունքների հաստատումը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝
1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է **„Պատվիրատուի,,** համաձայնությամբ:

2) **„Կատարողն,,** է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:
„Աշխատանքի,, կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ **„Պատվիրատուի,,** մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն **Պայմանագրի** պատշաճ կատարման պայմաններում կողմերի (**Կատարող** և (կամ) **Պատվիրատու**) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի **Կողմերի՝** կրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում **„Կատարողի,,** կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է **„Կատարողը,,**:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձևորգ չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 4 էջից, կնքվում են կրկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց **Կողմերի** գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Պատվիրատու»

Սյունիքի մարզպետարան
ք. Կապան 9, Եփեհի 1
ՀՀ ՖԼ Կենտրոնական գանձապետարան
Հ/Կ 980312000016
Հ/Կ 09415375



«Կատարող»

«ՎԻՎԱՄ» ՍՊԸ
Կապան 1, Երևան գործընթացի 14/5
ՓԲԲ «Կապան», ժ/6
7080149005
Հ/Կ 09416841



Վ. Բաղայան

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
 ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

„Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման,, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու փորձաքննության աշխատանքների

1. Ընդհանուր դրույթներ		
1.1	Աշխատանքի անվանումը	„Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման,, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու փորձաքննության աշխատանքներ
1.2	Եզանակութունը (խնդիրը)	„Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման,, աշխատանքների իրականացման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում ու փորձաքննության կատարում
2. Նախագծային առաջադրանք		
2.1 Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումն իրականացնել ՀՀ-ում գործող ՇՆ և Կ -ի համաձայն: Ապահովել նախագծային աշխատանքների կատարումը համաձայն դպրոցական շենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացության:		
2.2 Նախագծային փուլերը՝ Աշխատանքային նախագծին համապատասխան կազմել ամփոփ նախահաշիվ՝ այդ թվում օբյեկտային և լոկալ նախահաշիվներ: Կազմել աշխատանքների կատարման Ծավալաթերթ-նախահաշիվ /5-ական օրինակ թղթային և էլեկտրոնային/, փորձաքննության եզրակացություն:		
2.3 Աշխատանքի տեսակը՝ Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննություն աշխատանքի իրականացում:		
Աշխատանքների կատարման ժամկետը		
Սկիզբը		Ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից		30.06.2014թ.

„Պատվիրատու,,

„Կապալառու,,

„ՀՀ Սյունիքի մարզպետարանի
 աշխատակազմ,, ՊԿՀ
 ք.Կապան Գ. Նժդեհ 1
 ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձարան

«ՎԻԼՀԱՄ» ՍՊԸ
 ք. Կապան, Լեոնազործների 14/5
 ՓԲԸ
 Կապան, Դասնաճյուղ

ՔՏ 900312000046
 ՔՏ 424209115375

 Ռ. Պազարյան
 /Անտրագրություն/

ՔՏ 247080149005
 ՔՏ 09416841

 Վ. Բադալյան
 /Անտրագրություն/

Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի
2013թ. օգոստոսի 6-ի N673 Ն հրամանի

Հավելված N 3
04 հունիսի 2014թ կնքված
ՍՍ ԲԸԱՀ ԱՇՁԲ-14/01 01 պայմանագրի

„ Պատվիրատու, „
ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ
Հասցե՝ ք. Կապան Գ. Նժդեհ 1
ՀՀ ՖՆ Կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900312000046
ՀՎՀՀ 09415375

„ Կատարող, „
„ՎԻԼՀԱՄ, ՍՊԸ
ք. Կապան, Լեոնազործների 14/5
„ԱՇԻՐ, ՓԲԸ „ Կապան, մասնաճյուղ
Հ/Հ 247080149005
ՀՎՀՀ 09416841

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N__
Հ Ա Ն Ձ Ն Մ Ա Ն - Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն

« ____ » « _____ » 2014թ.

Պայմանագրի անվանումը
Պայմանագրի կնքման ամսաթիվը — 04 հունիսի 2014թ.
Պայմանագրի համարը — **ՍՍ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/01-01**

„Պատվիրատուն, „ ի դեմս՝ **ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Ավետիսյանի** և **„Կատարող, „** ի դեմս՝ **„ՎԻԼՀԱՄ, ՍՊԸ տնօրեն Վ. Բաղայանի** հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (այսուհետև **աշխատանքներ**) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի շրջանակներում **„Կատարող, „** .. 2014թ. -ից մինչև ..

2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել և հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագրությունը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ներթափառ գումարը /հազ.դրամ/	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
1	2	3	4	5
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքները հանձնեց՝

Աշխատանքներն ընդունեց՝

Վ. Բաղայան

Ռ. Ավետիսյան

(ստորագրություն)

(ԱԱՀ)

(ստորագրություն)

(ԱԱՀ)